ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԱՊՁԲ-8-6

ք. Երևան 30-ը հոկտեմբերի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Է. Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել (հավելված N 2) դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել,

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավել,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էական խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել են վճարման ժամանակացույցի վերջնաժամկետի օրը ներառյալ,

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 1750000 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից

կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 2):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.11 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ Աշխատակազմը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Արշակունյաց 12
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1510001906200100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02556646
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Գլխավոր տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 1
Ն ՄԱԱՊՁԲ-8-6 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման առարկան	Գնման առարկայի տեխնիկական բնութագիրը
1.	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Վազգեն Սարգսյան»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31գ., տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3մմ: Պատված է 999.9 հարգի 0.05գ. ոսկյա շերտով: Հուշամեդալի դիմերեսին ուռուցիկ հայերեն տառերով, ուղղահայաց գրված են «ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ» բառերը և պատկերված է զորավարի դիմապատկերը, որի ամենաբարձր կետն ունի 0.35մմ բարձրություն: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանը, որի ամենաբարձր կետն ունի 0.4մմ բարձրություն: ՀՀ զինված ուժերի զինանշանը եզերված է ձիթենու ճյուղերով, որի ռելիեֆի խորությունը 0.4մմ է: Հուշամեդալը տեղադրված է պոլիէստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որը տեղադրված է 1 տեղանոց զարդատուփի մեջ: Զարդատուփը մուգ դարչնագույն է, ունի 93x93x70մմ չափսեր: Զարդատուփի վերևամասը պատված է սպիտակ 70x70մմ չափեր ունեցող արհեստական կաշվով, որի կենտրոնում ոսկեգույնով պատկերված է ՀՀ ԶՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն, ռուսերեն և անգլերեն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Զարդատուփի ներսը պատված է սպիտակ թավշով: Զարդատուփի ներսում առկա է համապատասխան խոռոչ հուշամեդալը տեղադրելու համար և ժապավեն՝ իսկության հավաստագիրը փակցնելու համար: Իսկության հավաստագիրը ներառում է տվյալ զորավարի վերաբերյալ կենսագրական տվյալներ: Հուշամեդալը փաթեթավորված է հաստ ստվարաթղթե տուփով և տեղադրված է համապատասխան չափեր ունեցող թղթե տոպրակի մեջ, որի մի կողմում գտնվում է հուշամեդալը արտադրող ընկերության լոգոտիպը, իսկ մյուս կողմում ՀՀ ԶՈՒ զինանշանը և հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» գրվածքները:
2.	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Անդրանիկ Օզանյան»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31գ., տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3մմ: Պատված է 999.9 հարգի 0.05գ. ոսկյա շերտով: Հուշամեդալի դիմերեսին ուռուցիկ հայերեն տառերով, ուղղահայաց գրված են «ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆ» բառերը և պատկերված է զորավարի դիմապատկերը, որի ամենաբարձր կետն ունի 0.35մմ բարձրություն: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանը, որի ամենաբարձր կետն ունի 0.4մմ բարձրություն: ՀՀ զինված ուժերի զինանշանը եզերված է ձիթենու ճյուղերով, որի ռելիեֆի խորությունը 0.4մմ է: Հուշամեդալը տեղադրված է պոլիէստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որը տեղադրված է 1 տեղանոց զարդատուփի մեջ: Զարդատուփը մուգ դարչնագույն է, ունի 93x93x70մմ չափսեր: Զարդատուփի վերևամասը պատված է սպիտակ 70x70մմ չափեր ունեցող արհեստական կաշվով, որի կենտրոնում ոսկեգույնով պատկերված է ՀՀ ԶՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն, ռուսերեն և անգլերեն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Զարդատուփի ներսը պատված է սպիտակ թավշով: Զարդատուփի ներսում առկա է համապատասխան խոռոչ հուշամեդալը տեղադրելու համար և ժապավեն՝ իսկության հավաստագիրը փակցնելու համար: Իսկության հավաստագիրը ներառում է տվյալ զորավարի վերաբերյալ կենսագրական տվյալներ: Հուշամեդալը փաթեթավորված է հաստ ստվարաթղթե տուփով և տեղադրված է համապատասխան չափեր ունեցող թղթե տոպրակի մեջ, որի մի կողմում գտնվում է հուշամեդալը արտադրող ընկերության լոգոտիպը, իսկ մյուս կողմում ՀՀ ԶՈՒ զինանշանը և հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» գրվածքները:
3.	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Գարեգին Նժդեհ»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31գ., տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3մմ: Պատված է 999.9 հարգի 0.05գ. ոսկյա շերտով: Հուշամեդալի դիմերեսին ուռուցիկ հայերեն տառերով, ուղղահայաց գրված են «ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ» բառերը և պատկերված է զորավարի դիմապատկերը, որի ամենաբարձր կետն ունի 0.35մմ բարձրություն: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանը, որի ամենաբարձր կետն ունի 0.4մմ բարձրություն: ՀՀ զինված ուժերի զինանշանը եզերված է ձիթենու ճյուղերով, որի ռելիեֆի խորությունը 0.4մմ է: Հուշամեդալը տեղադրված է պոլիէստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որը տեղադրված է 1 տեղանոց զարդատուփի մեջ: Զարդատուփը մուգ դարչնագույն է, ունի 93x93x70մմ չափսեր: Զարդատուփի վերևամասը պատված է սպիտակ 70x70մմ չափեր ունեցող արհեստական կաշվով, որի կենտրոնում ոսկեգույնով պատկերված է ՀՀ ԶՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն, ռուսերեն և անգլերեն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Զարդատուփի ներսը պատված է սպիտակ թավշով: Զարդատուփի ներսում առկա է համապատասխան խոռոչ հուշամեդալը տեղադրելու համար և ժապավեն՝ իսկության հավաստագիրը փակցնելու համար: Իսկության հավաստագիրը ներառում է տվյալ զորավարի վերաբերյալ կենսագրական տվյալներ: Հուշամեդալը փաթեթավորված է հաստ ստվարաթղթե տուփով և տեղադրված է համապատասխան չափեր ունեցող թղթե տոպրակի մեջ, որի մի կողմում գտնվում է հուշամեդալը արտադրող ընկերության լոգոտիպը, իսկ մյուս կողմում ՀՀ ԶՈՒ զինանշանը և հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» գրվածքները:

4.	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Դրաստամատ Կանայան»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31գ., տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3մմ: Պատված է 999.9 հարգի 0.05գ. ոսկյա շերտով: Հուշամեդալի դիմերեսին ուռուցիկ հայերեն տառերով, ուղղահայաց գրված են «ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆ» բառերը և պատկերված է զորավարի դիմապատկերը, որի ամենաբարձր կետն ունի 0.35մմ բարձրություն: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված է ՀՀ զինված ուժերի զինանշանը, որի ամենաբարձր կետն ունի 0.4մմ բարձրություն: ՀՀ զինված ուժերի զինանշանը եզերված է ծիթենու ճյուղերով, որի ռելիեֆի խորությունը 0.4մմ է: Հուշամեդալը տեղադրված է պոլիէստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որը տեղադրված է 1 տեղանոց զարդատուփի մեջ: Զարդատուփը մուգ դարչնագույն է, ունի 93x93x70մմ չափսեր: Զարդատուփի վերևամասը պատված է սպիտակ 70x70մմ չափեր ունեցող արհեստական կաշվով, որի կենտրոնում ոսկեգույնով պատկերված է ՀՀ ՋՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն, ռուսերեն և անգլերեն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Զարդատուփի ներսը պատված է սպիտակ թավշով: Զարդատուփի ներսում առկա է համապատասխան խոռոչ հուշամեդալը տեղադրելու համար և ժապավեն՝ իսկության հավաստագիրը փակցնելու համար: Իսկության հավաստագիրը ներառում է տվյալ զորավարի վերաբերյալ կենսագրական տվյալներ: Հուշամեդալը փաթեթավորված է հաստ ստվարաթղթե տուփով և տեղադրված է համապատասխան չափեր ունեցող թղթե տոպրակի մեջ, որի մի կողմում գտնվում է հուշամեդալը արտադրող ընկերության լոգոտիպը, իսկ մյուս կողմում ՀՀ ՋՈՒ զինանշանը և հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» գրվածքները:
5.	Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Հովհաննես Բաղրամյան»	Հուշամեդալը պատրաստված է 925 հարգի արծաթյա մետաղից: 1 հատի քաշը՝ 31գ., տրամագիծը՝ 38մմ, հաստությունը՝ 3մմ: Պատված է 999.9 հարգի 0.05գ. ոսկյա շերտով: Հուշամեդալի դիմերեսին ուռուցիկ հայերեն տառերով, երկու տողով գրված են «ՄԱՐՇԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ» բառերը և պատկերված է զորավարի դիմապատկերը, որի ամենաբարձր կետն ունի 0.35մմ բարձրություն: Հուշամեդալի դարձերեսին՝ կենտրոնական մասում պատկերված են երկու հատ Խորհրդային Միության հերոսի «Ոսկե աստղ» շքանշանները, որոնց ամենաբարձր կետն ունի 0.4մմ բարձրություն: Շքանշաններից աջ և ձախ գտնվում են դափնու տերևներ, որոնց ռելիեֆի խորությունը 0.4մմ է: Հուշամեդալի դարձերեսի վերնամասում ուռուցիկ, երեք տողով գրված են «MARSHAL HOVHANNES BAGRAMYAN» բառերը, իսկ ներքևամասում պատկերված է ծածանվող ժապավեն, որի կենտրոնում գտնվում է հնգանկյուն աստղի պատկերը: Հուշամեդալը տեղադրված է պոլիէստերոլ նյութից պատրաստված թափանցիկ կաղապարի մեջ, որը տեղադրված է 1 տեղանոց զարդատուփի մեջ: Զարդատուփը մուգ դարչնագույն է, ունի 93x93x70մմ չափսեր: Զարդատուփի վերևամասը պատված է սպիտակ 70x70մմ չափեր ունեցող արհեստական կաշվով, որի կենտրոնում ոսկեգույնով պատկերված է ՀՀ ՋՈՒ զինանշանը: Զինանշանից ներքև՝ ոսկեգույնով, հայերեն, ռուսերեն և անգլերեն գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բառերը: Զարդատուփի ներսը պատված է սպիտակ թավշով: Զարդատուփի ներսում առկա է համապատասխան խոռոչ հուշամեդալը տեղադրելու համար և ժապավեն՝ իսկության հավաստագիրը փակցնելու համար: Իսկության հավաստագիրը ներառում է տվյալ զորավարի վերաբերյալ կենսագրական տվյալներ: Հուշամեդալը փաթեթավորված է հաստ ստվարաթղթե տուփով և տեղադրված է համապատասխան չափեր ունեցող թղթե տոպրակի մեջ, որի մի կողմում գտնվում է հուշամեդալը արտադրող ընկերության լոգոտիպը, իսկ մյուս կողմում ՀՀ ՋՈՒ զինանշանը և հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» գրվածքները:

Ծանոթություն.

Բոլոր չափերի թույլատրելի շեղումը 2%:

Նշված ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2018թ. նոյեմբեր
1	խորհրդանշական նվերներ /Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Վազգեն Սարգսյան»/	հատ	10	35000	350000	10
2	խորհրդանշական նվերներ /Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Անդրանիկ Օզանյան»/	հատ	10	35000	350000	10
3	խորհրդանշական նվերներ /Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Գարեգին Նժդեհ»/	հատ	10	35000	350000	10
4	խորհրդանշական նվերներ /Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Դրաստամատ Կանայան»/	հատ	10	35000	350000	10

5	խորհրդանշական նվերներ /Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Հովհաննես Բաղրամյան»/	հատ	10	35000	350000	10
Ընդամենը		1750000 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ				

Ծանոթություն.
Վերոհիշյալ ապրանքատեսակները մատակարարում են քաղաք Երևան, Բագրևանդի 5 հասցեով:
Կարտոֆիլի առաքումը զորամասեր իրականացվելու է մատակարարների տրանսպորտային միջոցներով:

Հավելված 2
Ն ՄԱԱՊՁԲ-8-6 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ., ընդ որում՝	
			նոյեմբեր	դեկտեմբեր
1	խորհրդանշական նվերներ /Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Վազգեն Սարգսյան»/	39281200/6/13/2	350000	350000
2	խորհրդանշական նվերներ /Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Անդրանիկ Օզանյան»/	39281200/7/13/2	350000	350000
3	խորհրդանշական նվերներ /Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Գարեգին Նժդեհ»/	39281200/8/13/2	350000	350000
4	խորհրդանշական նվերներ /Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Դրաստամատ Կանայան»/	39281200/9/13/2	350000	350000
5	խորհրդանշական նվերներ /Արծաթյա ոսկեպատ հուշամեդալ «Հովհաննես Բաղրամյան»/	39281200/10/13/2	350000	350000

Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ
Գլխավոր տնօրեն

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 3
N ՄԱԱՊՁԲ-8-6 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված3. 1
N ՄԱԱՊՁԲ-8-6 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն